

Գերեկային ճամբար գյուղական համայնքում

<<Ալվանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ -ի տնօրեն՝ Վերա Սևուկյան



1) Ծրագրի ընդհանուր նկարագիր

- Հունիսի 1-ից Երեխաների պաշտպանության օրը բացվում են Ալվանքի միջնակարգ դպրոցի դռները Մեղրու համայնքի բոլոր աշակերտների համար: Տոնական մթնոլորտը ապահովում են դպրոցի ուսուցչական կազմը, ուսումնաօժանդակ աշխատողները և ծնողական խորհրդի կամավորներ կայացուցիչները: Ճամբարի աշխատանքներին մասնակցում են նաև մանկավարժական համալսարանի ուսանող-կամավորները: «Դպրոցական ամառային-ցերեկային ճամբար գյուղական համայնքում» գործում է հունիս ամսվա ընթացքում՝ աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից մինչև 16:00-ը: Երեխաներն օրվա ընթացքում երկու անգամ սնվում են/նախաճաշ, ճաշ/: Ուսուցիչները կազմակերպում են տարբեր պարապմունքներ ըստ երեխաների նախասիրությունների/կերպարվեստ, երգ, սպորտային խաղեր, ֆիլմի դիտումներ և քննարկումներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ/: Հունիսի 30-ին տոնական ճամբարի փակման արարողություն/հաշվետու համերգ, տոնախմբություն խարույկի շուրջ/:



2) Ծրագրի նպատակը

- **Ծրագրի նպատակն** է երեխաներին տալ որոշակի բարոյական և մշակութային ավանդույթների ամբողջական համակարգ, որը նա ստանում է խաղի և ճանաչողական գործունեության միջոցով: Ընդգրկվելով ընկերական միջավայրում, նա ստանում է նոր հուզական արժեքավոր փորձ: Ճամբարի մթնոլորտը տալիս է երեխաներին հնարավորություն բացահայտելու սեփական անձի դրական հատկանիշները, զգալ սեփական <<ես>>-ի նշանակությունը, բարձրացնել ինքնագնահատականը, հասնել հաղորդակցության նոր մակարդակի, որտեղ չկա ագրեսիա և կոպտություն:

3) Խնդիրները

Մեր պարտքն է՝ ամառային հանգիստը դարձնել՝

- անվտանգ
- մատչելի
- օգտակար



4) Ծրագրի իրականացման պլան

ա) Նախապատրաստական փուլ

- **Նպատակը՝** նախապատրաստել ուսումնական հաստատությունը ծրագրի իրականացմանը /ճամբարի աշխատակազմ, դասարաններ, խոհանոց, նաշարան, մարզադահլիճ, դպրոցի բակ/
- **Քովանդակությունը՝**
- Ծրագրի գաղափարի մշակում: Քննարկել մանկավարժական խորհրդում <<Դպրոցական ամառային ցերեկային ճամբար գյուղական համայնքում>> ծրագիր-նախաձեռնությունը՝ Ալվանքի միջնակարգ դպրոցում իրականացնել միջոցառումներ՝ երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու համար:
- Ծամբարի աշխատանքը կարգավորող իրավական փաստաթղթերի փաթեթի կոմպլեկտավորում:

բ) Կազմակերպչական փուլ

- **Նպատակը՝** ձևավորել տարիքային խմբեր, հատկացնել դասասենյակներ
- **Բովանդակությունը՝** բացահայտել երեխաների նախաձեռնողական, կազմակերպչական և ստեղծագործական ունակությունները: Ծանոթացնել ճամբարի կանոնակարգին, օրվա ռեժիմին, կարգապահական կանոններին: Երեխաները ծանոթանում են դաստիարակների հետ :

գ) Հիմնական փուլ

- **Նպատակը՝** Իրականացնել ծրագրի հիմնական գաղափարը:
- **Բովանդակությունը՝** կազմակերպել խմբակային և ընդհանուր ճամբարային միջոցառումներ, էքսկուրսիաներ, մրցույթներ, վիկտորինաներ, սպորտային զանազան խաղեր, հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ...

դ) Եզրափակիչ փուլ (հերթափոխի 19-21 օր):

- **Նպատակը՝** արդյունքների ամփոփում:
- **Բովանդակությունը՝**
- Ճամբարի ընթացքում ձեռք բերված հմտությունների և կարողությունների ցուցադրում (հաշվետու համերգ, ցուցահանդես)
- Աշակերտների համատեղ գործունեության բավարարվածության վերլուծություն:
- Ճամբարի կյանքի մասին տեսաֆիլմի ստեղծում:
- Ամփոփել գործունեության արդյունքները, հանձնել մրցանակները:

5) Ծրագրի շարունակականության ապահովումը

- Ծրագիրը իրատեսական է: Կա 2017թ. դրական փորձը: Ամեն ուսումնական տարին վերջանալուց հետո, բացառությամբ քննական դասարանների, բոլոր երեխաները կարող են իրենց ցանկությամբ հաճախել ճամբար: Բացման արարողությունը կլինի հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության օրը:
- Ծրագրի շարունակականությունը կախված է ֆինանսավորումից: Եթե կան ծնողներ, որոնք պատրաստ են վճարել, որպեսզի երեխան վայելի ամառային հանգիստը, նույնիսկ ֆինանսավորումը խոչընդոտ չէ:
- Ալվանքի միջնակարգ դպրոցն ունի վերանորոգված ճաշարան և խոհանոց, որը կահավորված է և համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին:
- Դպրոցում աշխատում են երիտասարդ, բայց փորձառու ուսուցիչներ, որոնք տիրապետում են ժամանակակից մեթոդներին, նախաձեռնող են և այլն:
- 2021թ. ՄԱԿ -ի՝ Պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում դպրոցի բակում ստեղծվել է ինտենսիվ մրգատու այգի, որը հնարավորություն կտա ապագայում ունենալ արտաբյուջետային միջոցներ, որոնք կլինեն նոր ծրագրերի ֆինանսական աղբյուրները:

<<Ալվանք>> ամառային դպրոցական ցերեկային ճամբար

- Մեղրի համայնքում նախատեսված չունեցող ծրագիր, որը իրականացավ 2017 թ. հունիս ամսին համայնքապետի աջակցությամբ:
- Ուսուցիչները, ուսումնասովանողակ աշխատողները դարձրին երեխաների ամառային հանգիստը անմոռանալի :



6) Ծրագրային առաջարկը վերաբերում է արդեն իսկ կիրառված փորձին

2017 թ. Երեխաների պաշտպանության օրը՝ հունիսի 1-ին, Ալվանքի միջնակարգ դպրոցը բացեց իր դռները գ. Ալվանքի, Մեղրիի և Ագարակի երեխաների առջև: Ճամբար հաճախեցին 45 երեխա: Կազմավորվեցին 3 տարիքային խումբ: 1-5-րդ դասարանի աշակերտներ, 6-8-րդ և 9-12-րդ դասարանի աշակերտների համար:

Սպորտային խաղեր



Օրը ճամբարում հագեցած էր զանազան միջոցառումներով և պարապմունքներով



Սովորում ենք կրակել: Մենք հայրենիքի պաշտպաններն ենք:

















Մեր խորհին շնորհակալությունն ենք հայտնում պարոն Արշակ Գալստյանին առատաձեռն հյուրասիրության համար:



Համայնքապետը դատարկաձեռն չէր եկել: ճամբարի խոհանոցը համալրվեց նոր խոհարարական սպասքով, իսկ երեխաները հյուրասիրվեցին հյուր ու պաղպաղակով:





Այսօր Ալվանքի ամառային ճամբարում Մեղրու գեղագիտական կենտրոնի պարի մասնագետ տիկին Աստղիկ Խառատյանը անց կացրեց վարպետության դաս՝ տղաներին ցուցադրելով <<յարիսուշտա>> պարի շարժումները ...



Ալվանքի միջև. դպրոցի բարիքները









Մեր հյուրերն էին Մեղրու գեղագիտական կենտրոնի մասնագետները և երեխաները, տնօրեն՝ պարոն Ս. Գրիգորյանի գլխավորությամբ : Դպրոցի դահլիճը լի էր երգ ու պարով, խիստ ու ծիծաղով: Ամմոռանալի օր...



Այսօր՝ 20.06.2017 թ., Ալվանքի միջև. դպ. ճամբարում հայտնի դարձան
լավագույն շախմատիստները՝ Հայկ Ներսիսյանը և Նելլի Մաթևոսյանը:





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ